№ 267 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 267

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE
VENISE - St LAZARE

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և
7 ամսվանը 6 րուբլի:
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը:

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ
(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը 10 րուբ.	10 ամիսը 9 րուբ.	9 ամիսը 8 րուբ.	8 ամիսը 7 րուբ.	7 և 6 ամիսը 6 րուբ.	Այնուհետեւ ամսական Մէկ ռուբլի:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով: Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ:

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ:

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԵՐ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺ
ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ

Թաղման Կարգադրիչ Յանձնաժողովը վշտաբեկ յայտնում է ազգային դպրոցական, կուլտուրական, հասարակական հաստատութիւններին, ընկերութիւններին, յարգողներին և աշակերտներին, որ յուղարկաւորութիւնը բնակարանից (Семеновская, № 23) առաւօտեան ժամը 10-ին դէպի Վանքի մայր եկեղեցին, իսկ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը տեղի կունենայ այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 3-ին:

884. 1—1

Առևտրական Տան Ս. Հախնազարեանց, Ս. Աբեանց, Ս. Ներսէսեանց և Ընկերութեան ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ գրասենեակի համար հարկաւոր է մի փորձառու

ՀԱՇՒԱՊԱՀ

Ցանկալի է, որ լինի ագուլիսեցի և մի քանի տարի նոյն պաշտօնը վարած ուրիշների մօտ: Պայմանների համար դիմել Ընկերութեան՝ Վերին-Ագուլիս, հեռագրով—Верхніе-Акулисы, Ахабнерко.

(օ. մ.) տռ. 869. 3—2

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկներն
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելօվզօրով
Լ. Ա. Ջակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Ի. Ն. Տէր-Ներսէսեան
Հ. Ր. Փիշէր
Մ. Պ. Տահպարոնեանց

(հ. կ.) տռ 742. 100—15

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային Ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը:

Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2.
(եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սոլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(հ.հ.կ.) տռ. 634. 100—35

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով:

Առաւօտեան ժամը 10—12-ը:
Երեկոյեան » 5—7-ը:

Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին:

տռ. 779. 50—29

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր

ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը: Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67.

տռ. 753. 50—36

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարֆորից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով:

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից:

(ա. օ.) տռ. 515. 100—84

ԱՄՕԹ ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻՆ

Անշուշտ սոսկալի տպաւորութիւն պէտք է թողնի բոլոր հայերի վրա այն լուրը, որ տպվեց «Մշակի» երեկվայ համարում, թէ բոլգարական կառավարութիւնը 1100 հայ դասալիք զինուորներին յանձնել է Թիւրքիայի ձեռքը: Սոսկալի, որովհետև ոչ մի տարակոյս չը կայ, որ թիւրքական կառավարութիւնը այդ զինուորներին հրացանազարկ կանէ:

. . . եթէ խնդրի վրա նայենք պատմական, քաղաքական տեսակէտից, մենք խօսք չը պէտք է գտնենք որակելու Բոլգարիայի ստոր և զզուելի վարմունքը: Նա, Բոլգարիան, 1875—76 թ. ինքը ենթարկվել է այն արհաւիրքներին, որոնց այսօր ենթարկվել է հայ ազգը. Նա կրեց իբրև քրիստոնեայ ազգ այն սոսկալի տանջանքները, որ կրում է այսօր նոյնպէս քրիստոնեայ հայ ազգը. Նա շատ լաւ գիտէ, որ հայ զինուորը Թիւրքիայում եթէ փախել է, դասալիք է եղել, միայն նրա համար, որ նա պէտք է սպանվէր, կոտորվէր, խոշտանգվէր, այլ ոչ այն նպատակով, որ դաւաճանէ Թիւրքիային. Եւ նա չունեցաւ ասպետական զգացումն խնայելու մի բնաջինջ եղող քրիստոնեայ ազգի բեկորներին, որոնք ապաստան են որոնել իր ծոցում, հաւատալով նրա ասպետութեան, մեծահոգութեան և ազնուութեան:

Այնտեղ, ուր հայութիւնը տուեց հարիւր-հազարաւոր զոհեր, նահատակներ, 1100 նոր զոհերի և նահատակների կորուստը մի առանձին նշանակութիւն չունի, բայց հայ ազգը բնաւ չէ կարող մոռանալ, որ իր ազատարար Ռուսաստանին դաւաճանող Բոլգարիան, որի զօրքերի շարքերում, բոլգարական ազգի ազատութեան համար, քիչ չեն կռւել և թափել իրանց արիւնը և հայ երիտասարդներ, որի տնտեսական և արդիւնաբերական զարգացման համար քիչ չեն աշխատել և հայերը, նա, այդ Բոլգարիան, ստորութիւնը ունեցաւ հայերին ուղարկել սպանդանոց: Յաւիտենական նախատինք պէտք է դրոշմվի բոլգարական պատմութեան վրա:

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ:

ՊԱՐԻԶ.—Հաղորդագրութիւն Դարդանէլում կատարվող գործողութիւնների մասին.

Նոյեմբ. 28-ին և 29-ին տեղի ունեցաւ բաւականին ուժեղ թնդանօթաձգութիւն: Նոյեմբ. 29-ին մենք պայթեցրինք երկու ական, որոնք գործեցին մեծ աւերումներ թիւրքական զօրագծերում: Իսկ երբ դրանից անմիջապէս յետոյ թշնամու զօրքերը մտան խրամատների մէջ, մեր լայնաբերան թնդանօթները կրակ սկսեցին և ծանր կորուստներ պատճառեցին թիւրքերին:

ԿԱՀԻՐԷ.—Հրատարակվեց հետեւեալ պաշտօնական անգլիական հաղորդագրութիւնը.

Մեր զօրքերը հետախուզումներ կատարելով, նոյեմբ. 28 ին ընդհարվեցին Լիբանանի անապատում Մարսամատրի մօտ 3000 բէդուինների հետ. Թշնամին կռւից յետոյ փախեց դէպի արեւմուտք, կորցնելով 35 սպանված և 7 գերի: Մեր կորուստներն են 34 սպանված, որոնցից 16-ը օֆիցեր են. բացի դրանից՝ 3 օֆիցեր և 15 զինուոր վիրաւորված են:

ԼՕՆԴՕՆ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Միջագետքում, Կուտի մօտ գործող անգլիական զօրքերի հրամանատար գեներալ Տօունսէնդը տեղեկացնում է, որ թշնամին ռմբակոծեց անգլիացի զօրքերի գրաւած դիրքը նոյեմբերի 25 ի ընթացքում: Ռմբակոծութիւնը տեւեց նաև նոյեմբ. 26-ին, երբ թշնամին ամեն կողմից գործեց զատ-զատ յարձակումներ անգլիացիների դէմ: Թիւրքերը նոյեմբ. 27-ին նորից Կուտը ենթարկեցին ուժեղ ռմբակոծութեան և յարձակումներ գործեցին անգլիացիների դիրքերի վրա հիւսիսային կողմից, բայց յարձակումները յամառ բնոյթ չէին կրում: Թշնամին նոյեմբ. 28 ին վերսկսեց ռմբակոծութիւնը և երկու անգամ յարձակվեց հիւսիսային զօրաճակատի վրա, բայց բոլոր յարձակումները վանվեցին թիւրքերի համար ծանր կորուստներով:

Նէջզօպօրօյում դրանից յետոյ տիրում է լռութիւն: Արաբների վերաբերմունքը դէպի անգլիական զօրքերը, ինչպէս հաղորդում են, միանգամայն բաւարար է: Շտապով ուղարկվում է օգնութիւն.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 դեկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Արեւելեան զօրաճակատ:

Վանելով բոլգարների բոլոր յարձակումները, ֆրանսիական զօրքերը լոյս նոյեմբերի 29-ի գիշերը և հետեւեալ օրվայ առաւօտեան նորից սկսեցին նահանջել առանց կռւի, ըստ երևում, չը նայած ճանապարհի վատութեան, այդ նահանջը կատարվեց զօրահրամանատարի ցուցմունքների համաձայն և ամբողջ պատերազմական նիւթը աջողութեամբ տարվեց:

Նոյեմբերի 29-ին մեր զօրքերը գրաւում էին Գեվգելի-Տի խնդիր զօրագիծը:

ՍՕԼՈՒՆ.—Ֆրանսիական զօրքերի նահանջը դէպի յունական սահմանը մօտենում է իր վախճանին: Գեվգելի քաղաքը այրվում է երէկվանից: Անգլիական զօրքերը շատ խիստ կռւից յետոյ երեկ թողին Դօյրանը: Ֆրանսիացիների և անգլիացիների նահանջը ընթանում է հանգիստ, առանց խոշոր կորուստների:

Դաշնակիցներն ամրացնում են Կիլինդոր-Կարասուլի զօրագիծը:

Երէկ եկան 4 շոգենաւ անգլիական զօրքերով՝ ռազմամթերք բեռնած նաւերի ուղեկցութեամբ:

Սօլուն են ուղարկված մեծ թւով ֆրանսիական լայնաբերան թնդանօթներ: Սօլունի շուրջ դաշնակիցները ձեռնարկել են կառուցանելու խոշոր բերդեր:

Անգլօ-ֆրանսիական զինւորական շրջանները հաւատացած են, որ դիմադրութիւնը կը լինի թեթև, շնորհիւ պաշտպանողական աշխատանքների և նաւատորմի պաշտպանութեան. դիմադրութիւնը կը տեւէ մինչև Ֆրանսիայից և Անգլիայից օժանդակ օգնութիւն հասցնելը, որ անհրաժեշտ է առաջխաղացման դիմելու համար:

ՑԵՏԻՆԻԷ. — «Պրէսս Բիւրօն» հաղորդում է.

Նոյեմբերի 28-ին աւստրիական երկու աէրօպլան Սկադրի վրա նետեցին 7 ռումբ, որոնք վնաս չը պատճառեցին: Նոյն օրվայ կէսօրից յետոյ թշնամու ուրիշ աէրօպլաններ նետեցին 16 ռումբ Սանտիվարիի վրա. ռումբերից երկուսն ընկան իշխանուհի Դանիլօյի ամառանոցի այգու մէջ: Բացի դրանից մի ռումբ պայթեց ծխախոտի գործարանի տանիքի վրա. բարեբաղդաբար նա պատճառեց աննշան վնասներ. վերջապէս Դուլցինօյի վրա նետված երկու ռումբով սպանվել են մի քանի գլուխ անասուն:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Լրագիրները պնդում են, թէ, աւստրո-գերման շրջաններից բղխած տեղեկութիւնների համաձայն՝ արշաւանքը Սերբիայում աւարտվել է, ըստ երեւում աւստրո-գերմանական զօրքերի մի մասը շարունակում է մնալ սերբիական հողի վրա, իսկ մեծ մասը դուրս է հանված Սերբիայից:

Նուաճված սերբիական երկրի մէջ մտցվելու է բոլգարական-գերմանական խառն վարչական կազմ:

Ռուշչուկից տեղեկացնում են, որ աւստրո-գերմանական մօնիտորները շարունակ հսկում են Դանուբի վրա բոլգարական ափի մօտ: Բոլգարական լրագիրները արշաւանքը աւարտված չեն համարում և պնդում են, որ բոլգարական զօրքը հետապնդելու է անգլօ-ֆրանսիական զօրքերին Յունաստանի երկրի վրա:

ՊԱՐԻԶ.—Սենատի մէջ, արտաքին գործերի մասնաժողովի նիստում, Բրիանը պարզեց Բալկաններում տիրող դրութիւնը և յայտնեց, որ դաշնակիցների միջև տիրում է լիակատար համերաշխութիւն:

ԱԹԷՆՔ.—Չը նայած բոլգարների և աւստրո-գերմանական զօրքերի կատաղի յարձակումներին, դաշնակիցներին աջողվեց առանց մեծ կորուստների կրճատել իրանց զօրաճակատը յունաց երկրի վրա: Թշնամին կորցրեց 10,000 մարդ: Անգլօ-ֆրանսիական զօրքերը ձեռնարկել են նոր պաշտպանողական գիծ կազմակերպելու և սպասում են ուժեղ զօրամասերի:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Արեւմտեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ:

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն:

Արտիլերիական կռիւները կրում էին չափազանց յամառ բնոյթ Արտուայում, ուր մենք աւերեցինք մի դաշտային ամրութիւն, նաև էն գետից դէպի հիւսիս՝ Շամպանիում: Սէնմիէլից դէպի հիւսիս մեր թնդանօթային կրակը խիստ վնասեց թշնամու զինանոցը:

Մասսի աջ ափում Բուշօ անտառի ռմբակոծութիւնն ունեցել է լաւ հետեւանքներ. գերմանական խրամատներն այստեղ աւերվել են բոլորովին:

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Իզոնցօ գետի զօրաճակատի մօտ և Կարսօյում թշնամու արտիլէրիան երէկ ուժեղ գործունէութիւն ցոյց տուեց: Թշնամու հետեւակ զօրագնդերը մութն ընկնելուն պէս յարձակում գործեցին Օսլավիայի և Զէլցի վրա, բայց յարձակումը վանվեց թշնամու համար խոշոր կորուստներով: Գորիցայում մեր զօրամասերը մթութեան մէջ գրաւեցին թշնամու մի խրամատ, ձեռք ձգելով 30 հրացան և այլ աւար:

ԼՕՆԴՕՆ.—Լլօյդը տեղեկացնում է, որ անգլիական «Օստէրլի» շոգենաւը ջրասուզվել է. նաւաստիներն ազատվել են, բացի 2 զոհված չինացիներից և երեք ծանր վիրաւորվածից:

ԼՕՆԴՕՆ.—Ֆրանսիայից անգլիական գլխաւոր բանակից հաղորդում են.

Անցեալ գիշեր մենք պայթեցրինք մի ական Ժիվանշի զօրաճակատի վրա և գրաւեցինք առաջացած փոսը: Այսօր մենք ռմբակոծեցինք թշնամու դիրքը Իպրից դէպի արեւելք: Լա-Բասսէից դէպի հիւսիս կռիւ է խրամատային մօրտիրներով և ռումբերով:

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 դեկտեմբերի

ԼՕՆԴՕՆ.— Դիւանագիտական աղբիւրից տեղեկացնում են, որ շաբաթ օրը յունաց թագաւորը դիւանագիտական մարմնին տուել է միանգամայն բաւարար հաւաստիացումներ:

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ. — Վիեննայի քաղաքային ինքնավարութիւնը կարգադրել է ցուցակագրել բոլոր 17 տարեկան երիտասարդներին զօրահաւաքի համար:

ՏՕԿԻՕ.—Եապօնական Կանանց Բարեգործ. Ընկերութիւնը ուղարկեց տաք շորեր ռուս փախստականների համար:

ԱԹԷՆՔ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ այնտեղ պաշտօնանկ են եղել բոլոր քրիստոնեայ ծառայողները:

ՄՕՍԿՎԱ.—Քաղաքային դուման յատկացրեց Սերբիային օգնելու համար 100,000 ր. և Չեռնօգորիային՝ 25,000 ր.:

ԱԹԷՆՔ.—Ստոյգ տեղեկութիւնների համաձայն, դաշնակից նաւահանգիստներում բռնված յունաց նաւերին թոյլատրվել է շարունակել ճանապարհը դէպի Պիրէյ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ. - Ստատս-սեկրետար Կրիվօշէինը մեկնեց դէպի հարաւ, որպէսզի ընդունէ Կարմիր Խաչի գլխաւոր լիազորի պաշտօնը:

Թոյլատրված է գումարել դեկտ. 27—29 Մօսկվայում կանանց կազմակերպութիւնների համառուսական համագումար՝ պատերազմի կարիքներին օգնութեան հասնելու առիթով:

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Հեռախօս է հաստատվել Բերլինի և Սօֆիայի միջև. երրորդ օրն է՝ բոլգարական և գերմանական զինւորական մինիստրների միջև խօսակցութիւն է տեղի ունենում:

Մամուլի աւստրիական բիւրօն գլխաւոր բանակից յայտնում է, որ Չեռնօգորիայում աւստրիացիք հանդիպում են պարտիզանական կռիւների: Առ հասարակ Չեռնօգորիայի խաղաղ ազգաբնակութիւնն աւելի է գրգռված աւստրիացիների դէմ, քան Սերբիայում:

«Ֆօսիշէ-Ցայտունգը» հաղորդում է, որ Մօնաստիրում վարչութեան գլուխ նշանակվել է գերմանացի օֆիցեր:

ՊԵՏՐՕԳՐԱԴ. —Մասնաժողովը 4,200.000 ռուբլի յատկացրեց փախստականներին օգնելու համար և անհրաժեշտ գտաւ մասնանշել նահանգապետներին, որ մատակարարական օգնութիւնը պէտք է ստանան միմիայն աշխատանքի անընդունակ փախստականները, իսկ աշխատանքի ընդունակներից նրանք միայն, որոնք, յարգելի պատճառներով, ժամանակաւորապէս մնացել են առանց աշխատանքի:

ՄՕՍԿՎԱ.—Երէկ կայացաւ զինւորա-արդիւնաբերական կոմիտէի առաջին նիստը բանւորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, որոնք յայտնեցին, թէ իրանց պարտականութիւնն են համարում աշխատել կոմիտէի մէջ, վասնզի հայրենիքի փրկութիւնը պահանջում է ամբողջ ժողովրդի մասնակցութիւնը պետական պաշտպանութեան մէջ: Բանւորների ներկայացուցիչները ցանկացան, որպէսզի գումարվի բանւորների համառուսական համագումար:

ԼՕՆԴՕՆ. — Ռէյտէրի գործակալութեանը հեռագրում են Վաշինգտօնից. «Աւստրիայի պատասխանը ամերիկեան վերջնագրին—

«Անկօնա» ընկղմելու առիթով—սպասվում է ամենաուշը մի շաբաթ յետոյ։ Հակառակ դէպքում դիւանագիտական յարաբերութիւնների խզումը համարվում է անխուսափելի,

ԱԹԷՆՔ.—Կառավարութիւնը պատուիրագրեց յունական 5-դ զօրաբանակին դուրս գալ Սօլունից և բանակել մի այլ տեղում։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 դեկտեմբերի

ՊԵԿԻՆ.—Հանրապետութեան նախագահի հրամանով տեղական իշխանութիւնները պէտք է առանձին խիստ միջոցներ ձեռք առնեն յեղափոխական պրօպագանդան ճնշելու համար և պէտք է խիստ պատիժներ տան անկարգութիւններ առաջ բերողներին։

ՏՕԿԻՕ.—Պեկինի ճապօնական դեսպանին հրահանգներ են տրվել քառեակ համաձայնութեան ներկայացուցիչների հետ միասին նորից խորհուրդ տալ Չինաստանին յետաձգելու միապետութեան վերականգնումը։

ԼՈՆԴՈՆ.—Անգլիական Թագաւորին բժշկող բժիշկները հրատարակել են հետեւեալ յայտարարութիւնը. «Թագաւորն այն աստիճան կազդուրվել է, որ կարող է զբաղվել պետական գործերով, բայց, ի հարկէ, որոշ սահմանափակումներով։ Թագաւորը բաւական կորցրել է իր քաշի մէջ և այսուհետև մինչև նորմալ դրութեան վերականգնումը նորին մեծութեանը անհրաժեշտ է խուսափել յոգնելուց»։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ.—Մաշուկ լերան հարաւային լանջում 36 սաժէն խորութեամբ յայտնագործվեց տաք հանքային աղբիւր, որ իր տիպով մօտ է Պեատիգօրսկի նարզանին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Համաձայն ներքին գործերի մինիստրի որոշման, ի նկատի ունենալով թղթի թանգութիւնը, փաթթոցներ ուղարկելու փոխադրական հասցէագրերը, փոխադրական տոմսերը, նաև պօստային ծանուցագրերը կէս կոպէկից դառնում են 1 կոպէկ հատը, իսկ վերադիր վճարով փաթթոցների փոխադրական հասցէագրերը 1 կոպէկից 2 կոպէկ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «В. В.»-ին Աթէնքից հեռագրում են, որ Թիւրքական «Մաշիդ-փաշա» շոգենաւը ընկղմվել է Սիլիվրիայի ջրերում ֆրանսիական սուզանաւից։

◆ Պարիզում տեղեկութիւններ են ստացվել, որ մօտիկ ապագայում ռայխստագում սօցիալիստները նոր հարցապնդում են ուղղելու հաշտութեան մասին։

◆ «Ռեչ»-ի դիւանագիտական աղբիւրից տեղեկացնում են, որ սերբերը Տիրանայի մօտ միացել են Վալօնում ափ իջած իտալական զօրաբաժնի հետ։

◆ Յունաստանի հետ քառեակ համաձայնութեան պետութիւնները շարունակում են բանակցել գերմանական սուզանաւերի հարցի առիթով։ Դաշնակիցները պահանջում են, որպէսզի յունաց ջրերում սուզանաւերի դէմ կռւելու համար յարմար ռազմակայան ընտրելու իրաւունքն իրանց վերապահվի։ Յունաստանը դեռ չէ պատասխանել։

◆ Բոլգարները փորձել են յարձակում գործել խիտ զօրաշարքերով դաշնակիցների վրա, բայց կրել են խոշոր կորուստներ։

◆ Գերմանիան եռանդով աշխատում է թեքել Չինաստանին իր կողմը։ Հաղորդում են, որ Ճապօնիան վճռել է զէնքի ուժով արգելք լինել չինական հանրապետութիւնը միապետութեան փոխելու գործողութիւններին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(Մեր թղթակցից)

Ղազվին, 23 նոյեմբերի

Ղազվինի ռուսական զօրամասի դէպի Թէհրան ձեռնարկած արշաւանքից յետոյ, երբ մայրաքաղաքից սկսեցին փախչել գերմանական, աւստրիական և Թիւրքական ինտրիգան դեսպանները, սրանց հետևեցին կամայ թէ ակամայ և՛ նրանց գործակիցները՝ սկսած ամենաբարձրաստիճան պալատականներից մինչև վերջին մուջահիդն ու նրանց կողմնակից շվէդացիների ձեռքով մարզված ժանդարմերիան։ Այս բոլոր անցուդարձի տէր ու տնօրէններն էին դեմօկրատները, դրդմամբ գերմանացիների, որոնք, յոյսները կտրելով թէ շահ Ահմեդ-Ալիին իրանց հետ միասին այլ ևս կը կարողանան մայրաքաղաքից դուրս տանել դէպի Հարաւային Պարսկաստան, ապաստանեցին Կում քաղաքում՝ հիմնելով այնտեղ ժամանակաւոր կառավարութիւն։ Դրանից յետոյ նրանց առաջին գործն եղաւ հալածել այնտեղ եղած ռուսական մի քանի հաստատութիւնների մարդկանց, տիրելով նրանց փողերին և գոյքին, և ապա սկսեցին դրամ հաւաքել հարուստ մարդկանցից, որպէսզի բանակ կազմակերպեն ընդդէմ ռուսական զօրքերի։

Ինչպէս արդէն ծանօթ է, պարսից կառավարութիւնը ամենակտրուկ կերպով հերքեց այն լուրը, թէ ինքը գերմանացիների հետ դաշինք է կապել, և խոստացաւ ամեն կերպ աջակցել օգնելու, որպէսզի ռուսական զօրամասը կարողանայ երկրում թառած հակադաշնակից ուժերին վերջ տալ և ապահովել երկիրը։ Պարսից կառավարութիւնը յայտարարեց իր երկրի բոլոր նահանգների ազգաբնակութիւնը «Ռուս և անգլիական կառավարութիւնները մեր բարեկամներն են, ընդհակառակը Թիւրքական և գերմանական դաւադրութիւններին մենք դէմ ենք և թշնամական ենք յայտարարում այն բոլոր գործողութիւնները, որոնք կատարվում են մեր երկրում և ցրում են զէնքեր, որպէսզի թշնամութիւն սերմանեն մեր և մեր բարեկամ հարևանների միջև»։

. . . .

Առերեւոյթս ընդունելով միայն, որ պարսիկների այս ընթացքը խորդութիւն է, մենք ըստ էութեան չենք հաւատում, որ այս հաշտութիւնը կարող է տևական լինել և չը խառնված տեսնել Պարսկաստանը համաշխարհային այս պատերազմին յօգուտ կռւող կողմերից մէկն ու մէկի։

Ճիշդ է, որ դաշնակիցների և պարսից վերակազմեալ կաբինետի բանակցութիւնները շարունակվում են և հասարակութեան մէջ զրոյցներ են պտտում այն պայմանների մասին, որոնք պիտի վերջնականապէս հաստատեն կապ և դաշնակցութիւն առաջացնեն վերոյիշեալ պետութիւնների միջև ընդդէմ Եւրօպայի կենտրոնական պետութիւնների, բայց միւս կողմից էլ գերմանօ-թիւրք դաւերն աւելի ու աւելի յանդուգն են դառնում։ Այսպէս՝ ներկայումս Համադանում, Կումում և Սուլթանաբադում, շնորհիւ գերմանացիների տենդային աշխատանքի, կազմակերպվել է և կազմակերպվում է միլիցիա։ Այդ վայրերը բացառապէս գտնվելով թշնամիների ձեռքում՝ տակաւին անորոշ է մնում հաւաքված ուժերի քանակը և ձեռնարկութիւնները. միայն մայրաքաղաքի թերթերի կցկտուր տեղեկութիւններին նայելով՝ մեծ գումարներ են հաւաքում և ամեն ցեղապետների հետ յատուկ դեսպանութիւնների միջոցով յարաբերութեան մէջ են մտել, որպէսզի սրանց համոզեն դուրս գալու Ռուսաստանի և Անգլիայի դէմ։

Նայած առօրեայ փաստերին, ներկայումս գերմանացիք իրանց գործունէութեան ծանր մասը Սպահանից փոխադրել են դէպի Կում և Համադան, Քիրմանշահեան գծի վրա, որպէսզի մի կողմից փակեն ռուսական բանակին ուժեղ մի զօրամասի շարժումը դէպի Բաղդադ և միւս կողմից ուղղակի երկրի սիրտը համարվող այդ քաղաքներից կարողանան ապստամբական այդ գործողութիւնները տարածել ամբողջ Պարսկաստանում, որը սակայն չի աջողվի նրանց՝ շնորհիւ այն հանգամանքի, որ ռուսները վաղուց կարեւոր կէտերը գրաւել են, և որտեղ որ ռուսական զօրքերը լինեն, այնտեղ պարսիկը չի համարձակվի ծպտուն անգամ հանել, իսկ նոյն վիճակին պիտի ենթարկվի այն ծրագիրը, որով ուզում են արգելել, որ Բաղդադի ճանապարհը փակ լինի, երբևէ եթէ ռուսաց զօրքը կամենայ անցնել դէպի այն կողմը։

. . . .

Ս. Ցովեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Այսօր հողին է յանձնվում Սեդրաք Մանդինեանի աճիւնը։

Հայկական մանկավարժական աշխարհը, անշուշտ, մեծ կորուստ ունի և դժուար թէ այդ կորուստը կարելի լինի փոխարինել գոնէ մօտ ապագայում։

Ճիշդ է, Սեդրաք Մանդինեանը վերջին 15—20 տարիներում, երբ տառապում էր իր անագորոյն հիւանդութեամբ, այլ ևս ոչինչ չէր ստեղծագործում հայ մանկավարժութեան համար, բայց այն, ինչ որ նա առաջ ստեղծագործել և կատարել է, արժանի է յաւերժացնելու նրա անունը հայկական մանկավարժական գրականութեան պատմութեան մէջ։

Հանգուցեալը ծնվել է Թիֆլիսում 1844 թ. մի աղնուական ընտանիքի ծոցում, իր կրթութիւնը ստացաւ Լազարեան ճեմարանում և աւարտեց ուսումն այդտեղ 1863 թ.։ Ապա նա անցաւ արտասահման՝ Գերմանիա, ուր Հայդելբերգի, Լայպցիգի համալսարաններում և ապա Վիեննայի համալսարանում ստացաւ մասնագիտական մանկավարժական կրթութիւն և վերադարձաւ հայրենիք միայն 1874 թ. ու անձնատուր եղաւ մանկավարժութեան գործին։ 1876 թ. նա հրաւիրվեց տեսուչ Ներսիսեան դպրոցի և սկսեց մի շարք մանկավարժական աշխատութիւններ արտադրել, որոնց մէջ «Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար», «Ազգային ընտանեկան աշխարհ», «Դիւցազնական աշխարհ», «Նահապետական աշխարհ», «Դպրոցական սահմանադրութիւն», որոնց մէջ նա դրեց իր մանկավարժական ամբողջ հմտութիւնը և հոգին։

Այնուհետև նա եղաւ տեսուչ Ղարաբաղի թեմական դպրոցի և ապա հրաւիրվեց Էջմիածնի Գէորգեան ճեմարանը իբրև ուսուցիչ մանկավարժութեան և հոգեբանութեան։ Ճեմարանից յետոյ նա այլ ևս չը գործեց դպրոցական ասպարէզում և ցաւը ընկճեց նրան։

Նա չը բաւականացաւ զուտ դպրոցական գործունէութեամբ և զբաղվեց նաև մանկավարժական-հրապարակախօսական գործունէութեամբ, զետեղելով մշակված յօդուածներ «Վարժարան», «Արարատ», «Փորձ», «Արձագանք» հանդէսների մէջ։ Նա ծառայեց և հայկական բեմին 70-ական թւականներին, գործելով Պռօշեանի և այլոց հետ և յայտնի էր իբրև շատ աջող կոմիկ։ Նա հետաքրքրվում էր և հասարակական ու ազգային այլ հարցերով և առ հասարակ ունէր հետախոյզ, ուսումնասիրող և քննադատ ոգի և միտք։ Թէև 1900 թ. Գէորգեան ճեմարանը տօնեց նրա մանկավարժական 25-ամեայ գործունէութիւնը, բայց առ հասարակ նա մնաց չը գնահատված և չը վարձատրված։

Մենք հաւատացած ենք, որ հայկական քաղաքակրթութեան պատմութեան մէջ նա կը գրաւէ իր որոշ և պատուաւոր տեղը։

Ցաւակցական հանգիստ նրա աճիւնին։

Հ. Ա.

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

Էջմիածին, 1 դեկտեմբերի

Էջմիածնի հայկական հոգևոր ճեմարանի մանկավարժական խորհուրդը առանձին նիստում որոշեց արտայայտել իր խորին վիշտը ճեմարանի նախկին բեղմնաւոր ուսուցչի, վաստակաւոր մանկավարժի, որ դաստիարակել է մի ամբողջ սերունդ, Սեդրաք Մանդինեանի, խոշոր կորուստի առիթով։ Թաղմանը ներկայացուցիչ է ընտրված ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետը։

Տեսչի օգնական Աւետիք Պօղոսեան

(Հեռագրով)

Էջմիածին, 1 դեկտեմբերի

Խորին երախտագիտութեան և ակնածութեան զգացումով գլուխ ենք խոնարհում մեր անմոռանալի ուսուցչի և ճշմարիտ մանկավարժի աճիւնի առաջ։ Յաւերժ յիշատակ հայ դպրոցի բեղմնաւոր աշխատաւորին։

Աւետիք Տէր-Պօղոսեան, Լևոն Գեանջեցեան, Բաղդասար Բաղդասարեան, Յովսէփ Գրիգորեան, Յարութիւն Պետրոսեան, նկարիչ Հաղարապետեան, Սենեքերիմ Տէր-Յակոբեան, Սիմէօն Հովւեան, նկարիչ Սուրէնեան

Երեքշաբթի երեկոյեան Գրական-Գեղարվեստական Սալօնում, նախագահութեամբ Էջմիածնի ճեմարանի ռեկտոր Գարեգին վարդապետի, կայացաւ ժողով Սեդրաք Մանդինեանի յիշատակը յարգելու համար։ Գարեգին վարդապետը տալով հակիրճ ցուցակը հանգուցեալ վաստակաւորի կեանքի ու գործունէութեան՝ հրաւիրեց ժողովականներին յոտնկայս յարգել Սեդրաք Մանդինեանի յիշատակը։ Ապա սկսվեց խորհրդակցութիւն։ Խօսեցին Տէր-Միրաքեան, Ստ. Կանայեան, Խոստիկեան, Թառայեան, Բ. Միրիմանեան և ուրիշները։ Ժողովը պատշաճ համարեց, որ թաղումը լինի հանդիսաւոր և հասարակութեան ծախսով, թաղումից աւելացած գումարով գերեզմանի վրա կանգնեցնել արձան, կազմակերպել մի երեկոյթ վարժապետաց վարժապետի յիշատակին, հրատարակել անտիպ աշխատութիւնները, եթէ կան։ Տ. Նազարեան և Ստ. Կանայեան յայտնեցին, որ, այո, կան անտիպ և արժէքաւոր աշխատութիւններ։ Այս բոլորը կատար ածելու համար ընտրվեց յանձնաժողով, որի անդամներն են՝ Գարեգին վարդապետ, Սահակ աւ.-ք. Սահակեան, Տ. Նազարեան, Ստ. Կանայեան, Յ. Տէր-Միրաքեան, Բ. Միրիմանեան, Յ. Տէր-Գրիգորեան։

Ժողովից յետոյ յանձնաժողովը ունեցաւ առաջին նիստը Գարեգին վ.-ի նախագահութեամբ։ Ժողովը յանձնարարեց ընտրված յանձնաժողովին՝ հանգուցեալի ընտանիքին յայտնելու ցաւակցութիւն և ժողովի որոշումները։ Երէկ, ցերեկվայ ժամը 1-ին, Գարեգին վ.-ի առաջնորդութեամբ յանձնաժողովը յայտնեց ցաւակցութիւնն ու որոշումը ժողովի՝ հանգուցեալի այրուն ու զաւակներին։

—

Սեդրաք Մանդինեանի Գէորգ որդին պսակի փոխարէն ուղարկել է Տ. Նազարեանի ճաշարանին 35 ր.։

—

Այսօր, հինգշաբթի, «Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներին» ճաշարանում տրվում է հոգեհաց Սեդրաք Մանդինեանի յիշատակին։

—

Ուրբաթ Գրական-Գեղարվեստական Սալօնի հերթական հանդիսաւոր երեկոյթը նուիրվելու է Սեդրաք Մանդինեանին։

ՄԻ ՏԱՐԻ ԱՆՑԱՒ...

Անցել է ուղիղ մի տարի այն օրից, երբ մեր կեանքի անմխիթար հորիզոնում առաջին անգամ երևացին հայ փախստական գաղթականները։

Անցեալ 1914 թ. նոյեմբերից սկսած մինչև այսօր հայ փախստականների հարցը նոյն ցաւոտ սրութեամբ դրված է հայ հասարակութեան առաջ և մի մազաչափ չի մօտեցել իր լուծմանը, իր վախճանին, եթէ լուծում չը համարենք այն, որ մարդիկ կոտորվում են, անվերջ կոտորվում են…

Մի տարի անցնելուց յետոյ, կարծում ենք, թոյլատրելի է հաշուեյարդարի մի փորձ անել, տեսնելու համար թէ ի՛նչ ենք արել մենք և ի՛նչ պիտի անէինք։

Նախ տեսնենք, թէ ի՛նչ ենք արել։

Մենք հիմնել ենք բազմաթիւ կոմիտէներ, կոմիտէների ճիւղեր, բաժանմունքներ բոլոր հայաբնակ քաղաքներում, մինչև անգամ գիւղաքաղաքներում։

Կարելի է համարձակ ասել, որ թէ Կովկասում և թէ Կովկասից դուրս չը կայ մի հայաբնակ անկիւն, որ չունենայ իր սեփական կոմիտէն կամ նման մի մարմին՝ գաղթականներին օգնելու համար։

Այդ բազմաթիւ կոմիտէների մէջ առանձնապէս աչքի են ընկնում հայ իրականութեան մէջ երկուսը՝ մէկը Կովկասի մայրաքաղաքում, միւսը հինաւուրց Էջմիածնում։ Մնացած բոլոր կոմիտէները աւելի կամ պակաս չափով յարում են յիշված երկու գլխաւոր կոմիտէներից մէկին կամ միւսին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉՊԷՍ ԿՈՏՈՐՎԵՑԻՆ ՀԱՅԵՐԸ ՄՈՒՇԻ ԴԱՇՏՈՒՄ

II

Սակայն քիւրդերը դաշտի հայ ժողովրդին չը կարողացան ամբողջովին կոտորել. ամեն մի գիւղի ջրհորներում, թոնրաշրթերի շուրջը, գետնափոր ամբարներում շատերը պահված՝ դուրս անգամ չելան։ Շատերը քաշվեցին լեռները, Ծոգեարի, Ծղակի և Վարխաչի անտառները, որոնք ընտիր կաղնի ունեն և խոզի հաճար։ Լեռների այրերը, անտառները լաւ պատսպարան դարձան փախստականների համար, որոնք բոլորովին ազատ էին քիւրդական և թիւրքական յարձակումներից։

Հրաշալի պատսպարան էին Մեղրի վտակի Սոսկալի անուանված խանդակներն ու խրամատները, ուր գետի երկու ափին աճած ուռիները նոյնպէս ապահովաբար պատսպարան էին հալածված ժողովրդի համար։ Իսկ ամենից անձեռնմխելի թագստարանները Վարդենիսի շամբուտներն էին, ուր գրեթէ 1000-ից աւելի գիւղացի երկսեռ բազմութիւն էր պատսպարված։ Այդ շամբուտը թէև վտանգաւոր էր վարազներից և կինճերից, բայց այս պատառողները քիւրդերից շատ նուազ վնասակար էին, մանաւանդ որ պատսպարված վարդենիսցիների մէջ 300-ից աւելի վարժ հրացանակիրներ կային, որոնց գնդակները շատ քիչ վրիպող էին։

Ինչպէս որ հազարաւոր հոգիներ զոհ գնացին քիւրդական և թիւրքական անգթութիւններին, այնպէս էլ հազարաւոր երկսեռ ժողովուրդ ամայի դաշտերում թափառում էր մահվան ճիրաններից ճողոպրելու համար։ Թէև ազատվել էին թիւրքի խաթաղանից, քիւրդի ղլճից, չերքեզների գնդակներից և տեռօնների ռումբերից, բայց նրանցից աւելի զարհուրելի սով-գազանը իր ճիրաններով և ժանիքներով սպառնում էր անպատսպար, անտուն, անտէր ժողովրդին։ Յուլիսի երկրորդ կէսն էր, դեռ ցորեն, գարի չէր հասած, որ խանձէին և սառամօքներին մնեդ տային, կլորը (սեխ, ձմերուկ) օձի կաթի նման դառն էր, չէր կարելի ուտել։ Սարերի խոտը չէր կշտացնում, մնձի, երիժնակի, ժախի, ղախի ժամանակն անցել էր, այգիների տանձն ու խնձորը, ծիրանն ու դեղձը չէր կարելի բերան դնել, այնքան որ խակ էին։

Թափառականների միակ ապրուստը սխտորն ու սոխն էր, որոնք քաղվելու մօտ էին, բայց դրանց էլ առանց խաշելու դժուար էր ուտել։ Աղում էին հում-հում և յագուրդ էին տալիս գազան ստամոքսի անխուսափելի պահանջներին։ Սովն այնքան դաժան էր, որ վարդի կանաչ մասուրներ էին քաղում, աղում և ուտում։ Այսպէս ամբողջ շաբաթ թագստոցների մէջ անց կացրին փախստականները արևի սոսկալի ջերմութեան տակ, հալվեցին ու մաշվեցին՝ աւելի մահ խնդրելով, քան թէ մահից խուսափելով։

Շամբուտի և Ծոգեարի անտառների մէջ ապրող փախստականների վիճակն աւելի ապահով էր, քան թէ Մեղրի վտակի Սոսկալի խանդակի մէջ գտնվողների վիճակը։ Այնտեղ ուռիները փոքր էին, նրանց շուաքները նուազ, չէին կարողանում հովանաւորել թշուառներին, որոնք շոգից տառապում, հալվում էին։ Յաճախ անցորդ քիւրդերը խոտորվելով ուղիղ ճանապարհից՝ մոլորվում էին այս խանդակների մէջ և սոսկալի հոգեկան տանջանքների մատնում պատսպարվածներին։

Երբ քիւրդական քօչկանների կարաւանն սկսվեց, երբ ռուսական բանակը նեղը լծեց Խլաթի լեռնաշղթայի քիւրդերին, վերջինները հապճեպ ճանապարհ ընկան հարաւ-արևելքից դէպի հիւսիս-արևմուտք, որպէսզի ազատվեն կօզակների և կամաւորների մտրակներից ու գնդակներից։ Օրէ-օր կարաւանները աճեցին և արդէն հօրդաներով էին գնում, հազարաւորները միասին։ Ինչպէս որ հայերը տուն, տեղ, կայք, կանայք, պաշար ու ապրանք թշնամուն թողած ընկել էին սար-սար իրանց գլուխը փրկելու, այնպէս էլ ռուսական բանակի ռումբերի որոտներից ահաբեկված փախչում էին քիւրդերը ամեն բան թողած։ Նրանք իրանց հետ վեր էին առել միայն եզները, որոնց վրա բարձել էին իրանց կիները, դեռահաս երեխաները և ուտելիք, շտապում էին ծայրայեղ արագութեամբ և առանց զննելու իրանց շրջապատը։ Գնում էին, փախչում էին դէպի Մուշ, դէպի Սուլթան ս. Կարապետ, գուցէ և դէպի Դերսիմ, որ պատսպարվեն, կօզակների և կամաւորների վրէժխնդրութիւնից ազատվեն։

Սոսկալի խանդակի ուռիների և լայնատերև մասուրների տակ պատսպարված հայ փախստականները սրտատրոփ, սոսկալի երկիւղից արձանացած՝ լսում էին անցնող դարձող խմբերի ոտնաձայնը, նրանց խօսակցութիւնը և հոգեկան յոյզերը։ Շատ անգամ քիւրդական կարաւանները անցնում էին փախստականներից 20—30 քայլ հեռաւորութեամբ, որոնց խօսքերը շատ պարզ լսում էին շնչերը ծայրայեղ աստիճան մեղմացրած փախստականները։ Քիւրդական կիները, մանաւանդ հասակաւոր մարդիկ, որոնք չէին սիրում իրանց ջահելների մոլար ընթացքը, հառաչում ու կանչում էին.

— Սարաբի գեարդանը (պատճառ եղողի վզինքը) փշրվի, որ մեզ կռւեցրին մեր դրացի ֆլահների հետ։ Միթէ նրանք չէին իմանում, որ ֆլահը ուռուսի նման տէր ունի։

Այս յուսահատական հառաչներն ու խօսակցութիւններն այնքան խրախուսեցին հայերին, որ սրանք քաջալերված՝ կամաց-կամաց գնացին մօտի փախստական քիւրդերի տները, որտեղ գտան ցորեն, ալօրիք, ժաժիկ, իւղ, նոյն իսկ մաքի, կով, և սովածներն սկսեցին կշտանալ։ Սովն այնքան էր տանջել փախստականներին, որ եթէ քիւրդերի այդ յուսահատութիւնն էլ լսած չը լինէին, պիտի գնային անձնատուր լինելու և բռնի ուտելիք ձեռք բերելու։

Հետզհետէ հայ փախստականներն իրար գտան, իրար մօտեցան և տեղեկութիւններ ստացան, որ ռուսական բանակն արդէն հասել է Խլաթի Տափայ-վանքը, Գանջվայ կողմի քիւրդերին ճնշեցին և պարտաւորեցրին դէպի Մուշ և Դերսիմ փախչելու։ Ապա պարզվեց հայերի համար, թէ ինչի քիւրդերը հայհոյում էին «սարաբ» եղող այն մեծամեծ քիւրդերին, որ Մ. և Ա. ծրագրի իրագործման աջակիցներն և «ֆլահ» հայերին կոտորելով այդ բոլոր թշուառութեան պատճառ դարձան։ Թէև գաղտագողի, բայց արդէն իրար հետ յարաբերութեան մէջ մտնելով, հայերը միանալու և ընդհանուր թշնամուն դիմադրելու, վրէժխնդիր լինելու և ազատվելու ծրագիր կազմեցին։

. . . .

Այս կոտորածից յետոյ Նեմրութի և Բօսօրի լանջերին բնակված քիւրդերը վար իջան և մեծ արագութեամբ փախան դէպի արևմտեան-հիւսիս՝ Մուշ։ Այս փախուստի ժամանակ քիւրդերի տղամարդներն ու [illegible] տասնապատկվեցին, ամեն անցնող պահանջում էր թողնել Մ. և Ա. կոմիտէի և անցնել «ուռուսի» կողմը։ . . . .

. . . .

Քիւրդերը, հեռուից նկատելով կօզակներին, 7—10 մարդ քիչ առաջ նկան և միանուագ պարպեցին հրացանները։ Այս դուգն քայլը բորբոքեց կօզակներին, որոնք իրանց դիրքը կշռադատելուց յետոյ՝ վրա տուին և ջարդեցին քիւրդերին, սակայն կիներին, երեխաներին և ծերերին խնայեցին և թողին, որ անցնեն գնան։ . . .

. . . . քիւրդերի փախուստը սարսափելի էր։ Ամեն մի խումբ անցնելիս նրանց բողոքների, ողբերի ձայնը օդն էր թնդացնում։ Ամեն քայլափոխին անէծք էր լսվում «սարաբի» ջանին։

Փախստական հայերը ինչպէս դիմում էին դէպի ռուսական վաշտերը և գնդերը, այնպէս էլ հետամտում էին քիւրդերի քօչաններին, որոնք հարաւից անվերջ դէպի հիւսիս էին գաղթում։ Մուշի դաշտի խառն «[illegible]» տակ, կամ նրանց կատարներում թաքնված հայերը զննում էին կատարվածները և ամեն ինչ յայտնում իրանց բարեկամներին։

Այդտեղ Արքայ-շէնի գիւղացիները պատահեցին մի կօզակ վաշտապետի, որը դիտակով զննում էր Ղազարբեր գիւղը։ Կօզակին թւում էր բերդի նման ամրացած այդ գիւղը, ուր տեսնում էր բազմաթիւ սակեր հաւաքված։ Հայ փախստականների յայտնութիւններին չէր հաւատում, թէ այդ հայկական գիւղը 12 օր առաջ՝ Վարդավառի երկուշաբթի օրը լիովին ամայացած էր։ Երկար հարցուփորձերից յետոյ, վերջ-

Այսպիսով ստեղծվում են երկու կոմիտէների համակրութիւններ, սիստեմներ, որոնք ի դէմս իրանց առաջնորդների և նախագահների սկսում են միմեանց դէմ խուլ, բայց յամառ պայքար գաղթականական հարցում առաջնակարգ ու ղեկավարող դեր կատարելու և իրանց ֆիրմայի անունը հռչակելու համար։

Սկսում է փոխադարձ անգիտացումն այդ երկու կոմիտէների ղեկավարների մէջ, վնասակար ու նախանձոտ մրցումն լոկ անուան, ֆիրմայի համար և իսկական ու գլխաւոր գործը փոխարինվում է դատարկ ու անմիտ աղմուկի և ռեկլամի, որ մարդիկ տեսնեն ու իմանան, թէ «մենք էինք, որ առաջինը տեղեկութիւն ստացանք գաղթականների մասին, մենք էինք, որ առաջինը հեռագիր խփեցինք, մենք էինք, որ առաջին անգամ այս ինչ տեղը մարդ ուղարկեցինք, ուրեմն մենք պիտի լինենք գործի կենտրոնը»*)…

Կենտրոնամոլութիւնը գնալով սաստկանում է, կենտրոնացումով բռնվածների պայքարը գնալով ուժեղանում և գաղթականներին օգնելու հարցը անզգալի կերպով առաջնակարգից դառնում է երկրորդական, նոյն իսկ երրորդական… Գլխաւորը և կարևորը կարծես համարվում է այն, թէ ով պէտք է լինի «կենտրոն» և միահեծան կերպով տնօրինի գաղթականների վիճակը…

Ստեղծվում է մի տարօրինակ վերաբերում դէպի գաղթականները, որ կարելի է բնորոշել ու ձևակերպել այսպէս. «Եթէ գաղթականները իմ ֆիրմայի միջոցով չը պիտի փրկվեն, մենք ձեռքներս լուանում ենք, թող կոտորվեն»…

Եւ նրանք կոտորվում էին, անվերջ կոտորվում…

Կոտորվում էին նրանք ցրտից 1914 թ. դեկտեմբերին և 1915 թ. յունվարին, մարտին Իգդիրից սկսած մինչև Նոր-Բայազէտ ժամանակին տաք շոր ու վերմակ չը լինելու պատճառով, կոտորվում էին նրանք քաղցից և հիւծւածութիւնից յաճախ հացի տեղ ցեխ ստանալով…

Եւ այդ բոլորը կատարվում էր այն ժամանակ, երբ թէ Թիֆլիսում և թէ Էջմիածնում խոշոր գումարներ կային հանգանակված յօգուտ գաղթականների և հանգանակութեան հասանքը գնալով ուժեղանում էր… Չափից դուրս քիչ էր միայն այն սրտացաւ ու ազատ մարդկանց թիւը, որոնք թողնէին «կենտրոնը», նախագահութիւն չը տային գործի լոկ դեկօրատիվ կողմին, գնային գաղթականութեան բուն վայրերը և տեղումը իրանց ոյժն ու ժամանակը ամբողջովին նուիրէին գաղթականներին օգնելու գործը կազմակերպելուն…

Տեղական ոյժերը անում էին այն, ինչ որ հնարաւոր է հազարով ծանրաբեռնված մարդկանց համար, անում էին յաճախ և աւելին, բայց դա շատ քիչ էր ժողովրդական մեծ աղէտի դիմաց։

Նոյն յանցաւոր մրցումը, ռացիոնալ կազմակերպութեան և բոլոր ոյժերի ու կոմիտէների միահամուռ գործակցութեան նոյն բացակայութիւնը իրանց բոլոր տխուր ու սարսեցուցիչ հետևանքներով, բայց աւելի մեծ ծաւալով կրկնվեցին վեց ամիս յետոյ, յուլիսեան գաղթի ժամանակ։ Նոյն դրութիւնը շարունակւում է և մինչև այսօր։

Յուլիսեան գաղթականներին մենք մինչև նոյեմբեր չը կարողացանք տաք վերմակ հասցնել, որ նրանք բացօթեայ գիշերելով ցրտից չը հիւանդանան ու չը կոտորվեն մինչև մի ապաստարան գտնելը։ Շաբաթներ շարունակ ուժասպառ գաղթականներին մենք կերակրեցինք հացի փոխարէն այնպիսի մի զանգուածով, որից հարիւրաւոր հասակաւորներ ու մանուկներ գերեզման իջան… մինչդեռ այդ նոյն ալիւրից կարելի էր շատ լաւ հաց պատրաստել, եթէ գործի տեղումը բաւականաչափ թւով կազմակերպիչ ոյժեր լինէին…

Ո՞ւր էին և ինչ էին անում այդ ժամանակ Թիֆլիսի այն կենտրոնամոլ «երևելիները», որոնց անունն ու ամեն մի չնչին քայլի նկարագիրը կարդալուց մեր թերթերում յոգնել են հայ ընթերցողները…

Մի ամբողջ տարի է՝ մենք հանդիսատես ենք հայ ժողովրդի սարսափելի աղէտին, ամեն օր լսում ու տեսնում ենք հայ գաղթականների կրած աննկարագրելի տանջանքները ու նրանց կոտորածը, և այսքան ժամանակ մենք ընդունակ չեղանք ըմբռնելու այն պարզ ճշմարտութիւնը, որ անհրաժեշտ է ի մի ժողովել, «մօբիլիզէ» անել, ինչպէս ասում են այժմ, գաղթականութեան վայրերում մեր բոլոր բարոյական, նիւթական և մարդկային ոյժերը և հէնց այդ վայրերում միահամուռ ոյժերով կազմակերպել գաղթականներին օգնելու դժուարին և պատասխանատու գործը։

Ահա այս պիտի արած լինէինք մենք գաղթականութեան հէնց առաջին օրից, բայց չարեցինք մինչև այսօր…

Բայց դրա փոխարէն մենք բաժանել ենք Կովկասը երկու «ազդեցութեան շրջանների». Կարսի շրջանը մի քանի քաղաքներով վերցրել է իր հովանաւորութեան ներքոյ Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէն, իսկ Երևանի նահանգը գրկել է Եղբայրական Օգնութեան կոմիտէին…

Այս եղանակով պահպանվում է «հաւասարակշռութիւնը» երկու մեծ կոմիտէների միջև…

Այդպիսի անբնական պայմաններում մրցումն հակառակորդին նսեմացնելու և ոչնչացնելու համար համարվում է թոյլատրելի՝ ֆիրմայի շահերի տեսակէտից, դատարկ աղմուկը և անմիտ ռեկլամը դառնում են անհրաժեշտ՝ ֆիրմայի անունը բարձրացնելու համար։ Եւ սկսում է մեծագոյն դիմումների ու հեռագիրների տարափը, որի միակ նպատակն է հռչակել ու փառաբանել ֆիրմայի ներկայացուցչի անունը «ի ծագաց աշխարհի մինչև ի ծագս նորա»…

Խեղճ հայ ժողովուրդ, ինչու պիտի դու այդքան թշուառ լինէիր, որ քո խնամակալներն էլ այդքան անպատասխանատու զգային իրանց և այդքան անգութ լինէին…

Առողջ և անաղարտ հոգու տէր մարդու համար երևի այս բոլորը անհասկանալի կը լինի։ Դրա համար պէտք է ուսումնասիրել կենտրոնացուի կամ կենտրոնախոյս բնոյթը նրա ծագման իսկական վայրում…

Ճշմարիտ է ասած որ՝ «մենք յաճախ կամաչէինք մեր ամենալաւ գործերի համար, եթէ մարդիկ իմանային նրանց դրդիչ պատճառները»…

Մեր խօսքը չի վերաբերում իհարկէ այն կազմակերպութիւններին, որոնք լուռ ու մունջ, առանց թմբուկ հարկանելու մեծ ու անգնահատելի գործ են կատարել հայ գաղթականների համար։ Այդ տեսակ կազմակերպութիւնների մէջ իրաւամբ առաջին տեղն է բռնում Մոսկվայի հայկական կոմիտէն, որ մինչև այսօր շարունակում է իր անաղմուկ, բայց արդիւնաւէտ գործունէութիւնը։

Խորին ակնածութեամբ գլուխ ենք խոնարհեցնում այն անձնուէր գործիչների առաջ, որ զոհ գնացին իրանց մարդասիրական պարտքը կատարելիս, բողոքելով միևնոյն ժամանակ այն շռինդի ու շեփորի դէմ, որ ոմանք հարկ համարեցին բարձրացնել նրանց մահվան առիթով…

Մեր խօսքը չի վերաբերում նաև այն համեստ գործիչներին, որոնք լուռ ու մունջ կատարել և կատարում են իրանց մարդկային պարտքը դէպի իրանց դժբաղդ հայրենակիցները։ Առանց այդ անձնուէր գործիչների՝ գաղթականների դրութիւնը աւելի ևս վատթար կը լինէր։ Մեզանից քիչերը գիտեն այդ գործիչների մասին, որովհետև նրանք երբէք չեն ձգտել մեր ազգային աղէտը ծառայեցնել իրանց համար իբրև պատուանդան, որի վրա կանգնելով իրանց անձը տեսանելի կացուցանեն ուրիշներին, ինչպէս այդ արել և անում են մեր «կենտրոնամոլ երևելիները»…

Բագու Եր. Թադևոսեան

*) Այս խօսքերը նոյնութեամբ արտասանվել են մի մեծ ժողովում։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՒՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեքշաբթի, դեկտ. 1-ին, Հ. Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան մէջ կայացաւ խորհրդակցութիւն հայ գիւղացիների պարենաւորման գործի մասին, մասնակցութեամբ ընկերութեան վարչութեան անդամների և Հ. Բ. Ընկերութեան ու Նպաստ. Ընկ. վարչութիւնների ներկայացուցիչների։ (Առաջինի կողմից ներկայ էին Ս. Յարութիւնեան և բժ. Բ. Ազատարեան, իսկ երկրորդի կողմից՝ Հ. Առաքելեան և Ս. Մալխասեանց։

Գիւղատն. և Տնայնագործ. Ընկ. նախագահ Ա. Սահակեան զեկուցեց, որ մեր երկրի շատ շրջաններում հացի պակասութիւն կայ և գիւղացիները չեն կարողանում նոյնիսկ դրամով ալիւր ձեռք բերել, ուստի պէտք է նրանց օգնութեան հասնել և այս ձմեռվայ պարենաւորման գործին նպաստել։ Այդ նպատակով ընկերութիւնը բանակցութեան մէջ է մտել Վոլժսկո-Կամսկի բանկի հետ, որ խոստացել է գնել Ռուսաստանում 400 վագոն ալիւր և 300,000 պուդ ցորեն ամենամատչելի գներով և բերել հասցնել մինչև որոշ կայարան, ուր գիւղացիները կարող են վճարել փողը և ստանալ ալիւրը կամ ցորենը։ Ընկերութիւնը իր կողմից կաշխատէ ձեռք բերել նահանգապետից հարկաւոր քանակութեան վագոններ։

Խորհրդակցութիւնը, համակրելով այդ առաջարկին, գտաւ միևնոյն ժամանակ, որ գիւղացիները անկարող կը լինեն ամբողջ ժամանակ իրանց միջոցներով գնել ալիւր և ցորեն, քանի որ այժմ գիւղացիների տնտեսական դրութիւնը քայքայված է, այլ անհրաժեշտ է միջնորդութիւն յարուցանել կառավարութեան առաջ անվերադարձ փոխառութեան համար։ Այս առաջարկը նոյնպէս հաւանութիւն գտաւ։

Կ. Հ. Բ. Ընկ. ներկայացուցիչը յայտնեց, որ նոյն ուղղութեամբ գործում և աշխատում է և Բարեգ. Ընկերութիւնը։ Խորհրդակցութիւնը գտաւ, որ անհրաժեշտ է համագործակցութիւն, հաստատել և բիւրօ, բաղկացած երեք ընկերութիւնների ներկայացուցիչներից և այդ բիւրօյին յանձնել ընդհանուր գործի ղեկավարութիւնը։

Որոշվեց, որ երեք ընկերութիւնները այդ բիւրօյի անդամակցութեան համար, որ գումարվելու է Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկերութեան կից, տան երկուական ներկայացուցիչներ։

ԴՈՒՐՍ ԵԿԷՔ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ

I

Ծանր ճգնաժամ է հայ ազգի համար, որպիսին նա չէր տեսել իր պատմութեան սկզբից մինչև այսօր։ Ճիշդ է, նա շատ չարիքների է հանդիպել իր արկածալից պատմութեան ընթացքում, ճիշդ է, նա նոր չէ, որ լողում է արեան ծովերում, բայց այն, ինչ պատահեց ներկայումս բովանդակ թիւրքահայ ժողովրդին, մի այնպիսի տարածուն և ահեղ դժբաղդութիւն է, որ գերազանցում է մեր պատմական կեանքի նոյնիսկ ամենամութ շրջանները։ Ներկայ աղէտը այնպիսիներից է, որ վճռում է ազգերի գոյութեան, նրանց ապրելու կամ աշխարհի թատերաբեմից անհետանալու հարցը։ Եւ սակաւաթիւ հայ ժողովրդի համար թիւրքահայութեան՝ իր մայր հատուածի բնաջնջումը կարող է մահացու հարուած հասցնել մնացած հատուածների ազգային գոյութեանն իսկ։

Ո՞րտեղից՝ որտեղ…

Քառորդ դարից աւելի էր, որ հայ քաղաքական կազմակերպութիւններն աշխատում էին ոչ թէ միայն փրկել թիւրքահայի ֆիզիքական գոյութիւնը, այլ և ապահովել նրա համար քաղաքական լաւագոյն կարգեր։ Նախ Հնչակեան կուսակցութիւնն էր, որ հաւաքեց իր շուրջը ժամանակին տաքարիւն երիտասարդութիւնը և սկսեց հետևել մասնակի դաւադրական գործունէութեան։ Այդ առաջին արարուածին վրայ իջաւ 1895—96-ի արիւնոտ վարագոյրը։ Յետոյ, երբ հնչակեանները փոխեցին իրանց գործունէութեան ձևը և գրեթէ քաշվեցին հրապարակից, այս անգամ Դաշնակցութիւնն էր, որ նոր ոյժով մէջտեղ եկաւ, աւելի ընդարձակված ձևով շարունակելու հնչակեանների գործունէութեան սխեմը։ Դաշնակցութիւնը հասաւ արտակարգ աճումի. նա ծծեց իր մէջ հայ ժողովրդի բարոյական և նիւթական ոյժերը և ստեղծեց մի ոյժեղ հոսանք, որ հայ կեանքը քշեց, տարաւ իր ուզած ուղղութեամբ։ Եւ երբ ահագին զոհաբերութիւններից յետոյ բոլորը սպասում էին մի որևէ քիչ ու շատ գոհացուցիչ արդիւնքի, վրա է հասնում ներկայ ահաւելի բնաջնջումը։ Ինքնավար, ազատ կարգերի փոխարէն՝ ողջ մնացած հայերի առջևը պարզվում են Թիւրքահայաստանի արիւնաներկ, խոպան ամայացած գաւառները։

Ծայր է տալիս ուժգին հիասթափութիւն։

Կրաւորական շարժումը դադար է առնում, քննադատներն աւելի ոյժով են բարձրացնում իրանց ձայնը, հիպնոսացած մտքերը մի վայրկեան ինքնուրոյն են դառնում, և սկսում է արժէքների վերագնահատումի շրջանը։

«Արդեօք հայ ժողովրդի այս անլուր դժբաղդութեան մէջ՝ արտաքին պատճառների հետ մաս չունի՞ նաև մեր անտարբերութիւնը կամ գործունէութեան սխալ սիստեմը»։ Այսպէս են մտածում շատերը, և սկսում են լսվել զանազան ձայներ զանազան անկիւններից։

«Հայ ժողովրդին պատահած դժբաղդութիւնը անկախ է միանգամայն՝ հայ ծանօթ կուսակցութեան բռնած ընթացքից,— ասում է Թիֆլիսի մի հայ օրաթերթ,— և եթէ պէտք է մեղադրել մէկին, այդ լինելու է հայ չէզոք մասսան, որ ժամանակին չը բերեց մեզ սպասված օժանդակութիւնը»։ Սա առանց ամենափոքր տարբերութեան միևնոյն յանկերգն է, որ երգվում է 1896-ից ի վեր՝ այդ թերթի գաղափարակիցների կողմից։

«Հովիտը» մի անգամ էլ իր ձայնը բարձրացրեց և պնդեց թէ Գրիգոր Արծրունու ժամանակից սկսած՝ հայ կեանքը շեղվել է արդէն իր ուղղութիւնից, և թէ այն օրից ծագում առնող ազատական հոսանքը, թիւրքահայ դատի համար կազմված խմբակցութիւնները, բոլորն էլ օգտի փոխարէն վնաս են բերել հէնց այդ դատին, և թէ հայ ժողովուրդը իր տանը այն օրից քանդեց, երբ ընկաւ դիպլոմատիայի պատյանների մէջ։

«Մշակը» յայտարարեց, թէ «տնաբոյս յեղափոխականները» իրանց անխոհեմ տակտիկայով նպաստեցին թիւրքահայերի դրութեան վատթարանալուն, որը յանգեց ներկայ դժբաղդութեան։ Եւ որպէսզի մնացած մի բուռը հայութիւնն էլ կործանման չը մատնվի նման սխալների երեսից, առաջարկեց կազմել մի հայ լիբերալ խմբակցութիւն, որ ձևացնէ այսպէս ասած մի կենտրոնական կուսակցութիւն և իր ձեռքն առնելով ազգային գործերի ղեկը՝ չը թողնէ, որ ծայրայեղ տարրերից կազմված փոքրամասնութիւնը նրան քշէ իր ուզած ուղղութեամբ։

Այս առաջարկի դէմ հրապարակ ելաւ «Հովիտը»։

Հաստատ կարելի է ասել, որ «Հովիտի» առարկութիւնները կը բաժանեն նաև ռուսահայ թէ արտասահմանի հայութեան զանազան խաւերը, եթէ ոչ յայտնապէս՝ գոնէ լռելեայն։ Եւ իբրև այդ՝ արժէ քննադատաբար մօտենալ նրանց, մանաւանդ որ խնդիրը աւելի քան այժմէական է և ունի գործնական անմիջական նշանակութիւն։

«Հովիտը» յիշում է նախ 1860-ի թիւրքահայերի ազգային սահմանադրութիւնը, որ չը կարողացաւ նորից արգելք լինել «կազմակերպված փոքրամասնութեան», որովհետև իր ձեռքն առաւ ազգի ղեկը և քշեց նրան իր ուզած ուղղութեամբ։ Հետևաբար, ասում է նա, երբ մի այդպիսի համազգային պաշտօնական կազմակերպութիւն չը կարողացաւ գործերին լաւագոյն ընթացք տալ, ինչ իմաստ ունի ստեղծել մի նոր կազմակերպութիւն։

Այստեղ յայտնի հակասութիւն կայ։

Ասել, թէ ազգ. սահմանադրութիւնից աւելի ուժեղ եղաւ կուսակցական փոքրամասնութիւնը, կը նշանակէ զատել իրարից այդ երկու հասկացողութիւնները։ Այլ բան է կուսակցութիւն, այլ՝ սահմանադրական վարչութիւն. և այն պարագան, որ, ըստ «Հովիտի», փոքրամասնութիւնն կազմող կուսակցութիւնը յաղթեց ազգային պաշտօնական մի կազմակերպութեան, ինքնին ցոյց է տալիս, թէ հասարակական կեանքում ինչքան ուժեղ ֆակտոր է ներկայացնում կուսակցութիւնը։

Իսկ թէ ինչու թիւրքահայ սահմանադրութիւնը չեղաւ այն, ինչ պէտք էր լինէր, այդ խիստ հասկանալի կը դառնայ խնդրին մի քիչ մօտից նայելիս։ Կ. Պոլսի «ազգային խորհրդարանը» ներկայացնում էր մի մարմին առանց ձեռքերի. ուզում եմ ասել՝ առանց գործադիր ոյժի։ Նրա որոշումների գործադրութիւնը կախված էր անհատների բարեկամեցողութիւնից։ Կարելի էր բացէ ի բաց դէմ գնալ Ղալաթիոյ խորհրդարանի վճիռներին. նա չունէր ոչ մի միջոց իր կամքը պարտադրելու համար։ Եւ արդիւնքը լինում էր արխիվը լեցնող արձանագրերի կապոցները միայն։

Մինչև այժմ էլ կեանքը ցոյց չէ տուած աշխարհի որևէ մէկ անկիւնում մի կառավարութիւն, որ կանգուն կենայ միմիայն պարտքի գիտակցութեան բարոյական ոյժով։ Եւ օսմանեան կառավարութիւնն այդ գիտենալով էր, որ հայերին նուիրել էր սահմանադրութեան «քառակուսի անիւներով կառքը», թիւրք փաշայի խոստովանութեամբ։

Այդ թերութիւնից որոշ չափով զերծ է կուսակցութիւնը։ Նա աւելի ուժեղ կապով է միացնում անհատներին իրար հետ, շատ աւելի մօտից է ընդգրկում անհատի առանձին կեանքը և դառնում է պարտադրիչ մի ոյժ, որ հաւասարվում է գրեթէ բանի ֆիզիքական ոյժի։ Այնպէս որ՝ «Հովիտը» սխալվում է երբ ազգային սահմանադրութեան անաջողութիւնից հետևցնում է, թէ նոյնքան անաջող լինելու է և մի կազմակերպութիւն։

«Հովիտը» ասում է, թէ թիւրքահայ դատի համար կազմված կուսակցութիւնները, Հնչակեանութիւնն ու Դաշնակցութիւնը, իբրև արդիւնք՝ տուեցին միայն ներկայիս մէկ միլիոն հայերի դիակները. հետևաբար մի նոր կազմակերպութիւն տարբեր արդիւնք չը պիտի կարողանայ տալ։

Այստեղ էլ մտքերի միևնոյն շփոթութիւնը։

Եթէ Հնչակեանութիւնն ու Դաշնակցութիւնը վնասեցին ազգին, այդ չի նշանակում, թէ կազմակերպութիւններն ինքնին վնասակար դարձան ժողովրդին. այլ որ նրանք սխալ ուղղութեան հետևեցին։ Պէտք է օգտվել անցեալ փորձառութիւններից և ձեռք քաշել հին սխալներից, բայց ոչ գործունէութեան միջոցից։ Նաւը սխալ ուղղութեամբ տարվելով կը զարնվի խութերի և կը փշրվի։ Այդ չի նշանակում, թէ նաւը ինքնին վնասակար բան է։ Ո՛չ, նա անհրաժեշտ է։ Միայն ճամբի ուղղութիւնն է, որ պէտք է փոխել։

Կայ սակայն վերջին մի առարկութիւն էլ։ «Ի զուր են այդ կոչերը,— ասում է «Հովիտը»,— որովհետև գեղեցիկ ծրագիրները չեն, որ մի ազգ կազմակերպում և վտանգներից փրկում են, այլ ծրագրի գործադրողների վսեմ նկարագիրն է, որ ընդունակ է ազգը ղեկավարել և նրան վտանգներից փրկել»։

Նոյնքան տրամաբանութեան պակաս և այս պարբերութեան մէջ, որը կազմում է յօդուածագրի յայտնած մտքերի պսակը, նրանց խտացումը։

Որ վսեմ նկարագիրներ անհրաժեշտ են, որ այդպիսիների գոյութիւնը մեծ բարիք է հասարակութեան համար, ինքնին մի անվիճելի, բանալ հասկացողութիւն է։ Բայց հասկանալի չէ, թէ այդ վսեմ նկարագիրները ինչպէս պիտի փրկեն ազգը։ Զի որ ամենավսեմ նկարագիրն իսկ առանձին ոչինչ չի կարող անել. այլ պէտք է քարոզել, համախմբել իր շուրջ իրա նման մտածող անհատները, կազմի գործունէութեան մի ընդհանուր ուղի… Եւ ահա ծնունդ առաւ մի կուսակցութիւն, կամ ընկերութիւն, կամ աղանդ, ինչ ուզում էք անուանեցէք, էութիւնը նոյնն է։ Այսպէս ամենաուժեղ և ամենազնիւ անհատներն իսկ՝ ցրվելով իրանց ոյժերը՝ անսիստեմ, անհաշիւ տարածութեան վրա, չեն հասնում ոչ մի արդիւնքի։ Հէնց քրիստոնէական կրօնը լոկ իր ամենավսեմ նկարագրով և հեղինակով կարող էր արդեօք տարածվել և շօշափելի ոյժ դառնալ, եթէ նա չունենար իր կազմակերպված մարմինը՝ եկեղեցին։

Այսպիսով էլ վերջանում է «Հովիտի» քննադատութիւնը, և ընթերցողը տեսնում է, որ մէջտեղը կայ սխալ տրամաբանութեան հետևանք եղող մի ժխտական եզրակացութիւն։ Կուսակցութիւնները վնասակար են եղել, ուրեմն կուսակցութիւններ պէտք չեն։ Իսկ թէ ինչ է պէտք, ինչպէս անելու է որ «ազգը լաւ կերպով ղեկավարվի և վտանգներից փրկվի», այդ մասին ոչինչ չի ասված։ Սա արդէն մեր հասարակական բարքերի ամենացաւոտ մէկ կողմն է։ Մենք ունենք անխորհուրդ գործողներ, ունենք նրանց քննադատներ, բայց չունենք գործունէութեան լաւագոյն ձևի հետևողներ։ Փորձեցէք մօտենալ ամենախիստ քննադատողին և առաջարկել, որ նա իր համոզմունքների համաձայն մի գործ սկսի։ Նա մէջտեղ կը բերի անթիւ պատրուակներ և իր օձիքը կազատի քո ձեռքից, շարունակելու համար իր կծու քննադատութիւնները, որոնք դատապարտված են անհետ կորչելու՝ ընկնելով նախաձեռնութիւնից զուրկ մասսայի մէջ։

Հայ հասարակութեան ոչ մէկ հատուածը թող չը փորձի անցեալ և ներկայ չարիքների պատասխանատուութիւնը փաթաթել միմիայն այս կամ այն կուսակցութեան վզին։ Մեղաւոր է ամբողջ ազգը։ Եւ այս ասում ենք ոչ իբրև խօսքի ձև, այլ իբրև փաստացի ճշմարտութիւն։

(«Վան-Տոսպ») Վ. Պապազեան

ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Մոսկվա, 26 նոյեմ.

Մոսկվայի հայ տիկինների կոմիտէն կազմակերպում է այս տարի մի շարք ներկայացումներ, կոնցերտներ և դասախօսութիւններ, որոնց ամբողջ եկամուտը պիտի յատկացվի հայ փախստականներին։

Առաջին ներկայացումը տրվեց նոյեմբեր 23-ին Ն. Բալիեվի «Летучая мышь» թատրոն-cabaret-ում։ Ներկայացման նպատակը և ճոխ ծրագիրը թատրոն էին բերել բազմաթիւ հասարակութիւն։ Բուֆետում ծառայում էին տեղիս հայ կոլոնիայի յայտնի տիկինները և օրիորդները։

Ընդհանուր մուտքն է 9000 ր., որից զուտ արդիւնք կը մնայ մօտ 6000 ր.։

Ամսիս 27-ին նոյն կոմիտէի նախաձեռնութեամբ Ա. Չիլինգեանը կը կարդայ դասախօսութիւն նոյն նպատակով։

Ե. Ց.

ԱՋԱԿՈՂՄԵԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՒԸ

«Р. Сл.»-ին հեռագրում են Նիժնի-Նովգորոդից, որ աջակողմեանների համագու-

---

համոզվեցին և դիմեցին գիւղը չօգի դէմ պաշտպանելու, գուցէ և լաւ դիրքեր կազմելու յոյսով։

Հեռուից այդ բերդաձև գիւղը իր եկեղեցով և կրկին աշտարակներով որքան որ հսկայ դիրք ունէր, այնքան մռայլ և քստմնեցուցիչ էր ներքին տեսարանը։ Տներից շատերը կործանված էին, շատերի դռները չէին բացվում։ Իրանց կամքով անձնատուր չեղող հայերին Մուսա-բէգի, Նէրօ-բէգի, Ղասըմ-բէգի, Աբդուլ-Մէջիդ-բէգի և Բեօռ-Հիւսէին-փաշայի ձիաւորները անխնայ կոտորել էին և անթաղ թողել էին իրանց բնակարաններում։ Յուլիսի սոսկալի տօթերին այդ դիակները նեխվել և զարհուրելի գարշահոտութիւն էին արձակել։ 90 տուն բնակչով այդ գիւղում ոչ միայն կենդանի ոչ մի հոգի չէր մնացել, այլ որևէ անասուն, շուն անգամ չէր երևում փողոցներում։

Երբ օֆիցէրը և կօզակները մօտեցան եկեղեցուն և ուզեցին դուռը բանալ, սոսկացին։ Աւելի քան 500 հոգի Վարդավառի օրը մտել էին եկեղեցի և չէին դուրս եկել, հակառակ քիւրդերի պահանջներին։ Քահանան պատարագել, հաղորդել էր բոլորին, և պատրաստվել էին տաճարի մէջ մահվան դիմաւորելու և մարտիրոսվելու, քան թէ քիւրդերի մէջ բաժանելու իրանց զաւակներին և գեղեցիկ սեռը։

Քիւրդերը շրջապատել էին եկեղեցին, լուսամուտից գնդակահարել ու ջարդել բոլորին, այնպէս որ եկեղեցու յատակն ու պատերը մարտիրոսների վարդագոյն արիւնով ներկվել էր։ Արիւնն այնպէս էր ցայտել, որ մարտիրոսների շապիկները, վարտիքները ու էնթարիները ծիրանի գոյն էին ստացել։ Ամբողջ ժամեր հարկաւորվեց, մինչև որ կօզակները կարողացան բանալ եկեղեցու դուռը և տեսարանի տպաւորութիւնից ընկճված՝ լացին և արտասուքով ծածկեցին իրանց կրծքերը։

Եկեղեցու մէջ գտան ոչ միայն զգեստաւորված քահանային իր թաղով, տիրացուներին իրանց սպիտակ շապիկներով, որոնք ծիրանացել էին մարտիրոսական արիւնի մէջ, այլ հարսներին, աղջիկներին, պատանիներին և կորիճներին գտան իրանց զարդերի մէջ ամփոփված։ Մայրը գրկած իր սիրասուն աղջկան, հայրը՝ իր հոգեհատոր տղային, փեսան իր նշանածին կամ կնոջը, եղբայրը քրոջը, որոնք իրար սեղմված կարծրացել ու մնացել էին։

Մինչ կօզակներն ու օֆիցէրը այդ սոսկալի տեսարանի առաջ ողբում էին թշուառների զարհուրելի վախճանը, հայ փախստականներն ընկան տնից-տուն, ախոռից-ախոռ, ջրհորների մէջ պահվածներին լոյս աշխարհ հանելու, սարսափի մթին որջերից ազատելու։ Փալանքներից (ճիլ) շինված ճաղերով (չվան) իջնում էին հորերի յատակները, գտնում և ողջ մնացածներին դուրս էին բերում կիսամեռ։

Նկատելի էր, որ քիւրդերը հորերի բերանից քար, փայտ էին գցել, գնդակ արձակել, բայց շատերն անվնաս էին մնացել, որոնց դուրս հանեցին, ուշքի բերին և սնընելով կազդուրեցին։ Այդ սոսկալի վիճակը տեսնելուց յետոյ միայն կարողացան ըմբռնել կօզակները, թէ ինչ անգութ և դաժան կերպով էին կոտորում թիւրքերն ու քիւրդերը հայերին, որ նրանց բնաջնջեն։ Այստեղ միայն ըմբռնեցին, թէ ինչ արդար ոխակալութեամբ և վրէժխնդրութեամբ էին լցված հայերը դէպի այդ գազան տարրը, թէ ինչու էին հայերը ձգտում փոխադարձաբար կոտորել քիւրդերին։

Աստղիկ

մարը, փակվելով, ընդունեց հետևեալ բանաձևը.

1) Պետական Դումայի և խորհրդի այն անդամները, որոնք պատկանում են առաջադէմ բլոկին, պէտք է յանձնվեն դատարանին:

2) Զինւորա-արդիւնաբերական կոմիտէտները պէտք է փակվեն անմիջապէս:

3) Կառավարութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնէ զեմստվային և քաղաքային միութիւնների վրա, նրանց վատնումների և միութիւնների գործիչների խոշորագոյն ռոճիկների վրա:

4) Ներկայացնել Գորեմըկինին տուեալներ Իգնատիեվի գործունէութեան մասին:

5) Ոչնչացնել համալսարանական աւտօնոմիան:

6) Վերացնել Իգնատիեվի կարգադրութիւնը հրէաներին ընդունելու մասին:

7) Վերացնել ծնողական ժողովները և ուժեղացնել հսկողութիւնը դպրոցից դուրս:

8) Մտցնել կրթական հաստատութիւններում զինւորական արհեստ:

9) Արտաքսել հրէաներին ռուսաց կրթարաններից և իրաւունք տալ նրանց կրթութիւն ստանալ իրանց դպրոցներում:

10) Ընդունել, որ հրէաների ասիմիլացիան, ի նկատի ունենալով նրանց վնասակարութիւնը, անհնարին է. մշտական բնակավայրի արգելքը պէտք է վերացնել պատերազմը վերջանալուց յետոյ:

11) Խլել գերմանական կոլոնիստների հողերը և տալ զինւորականներին:

12) Պետական Դուման, եթէ նա ոտք դնէ յեղափոխական ճանապարհի վրա, արձակել և պատերազմը աւարտվելուց յետոյ նշանակել նոր ընտրութիւններ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ինչպէս յայտնի է, Թագաւոր Կայսրի անցած տարվայ նոյեմբերին Թիֆլիս այցելելը մի բանով յաւերժացնելու համար, քաղաքային դուման որոշեց այլևս չը պահանջել քաղաքի աղքատ ազգաբնակութեան անվճար տուրքերից 50,000 ր.: Այդ որոշման հիման վրա քաղ. վարչութիւնը ստացել է անթիւ խնդիրներ տուրքերը ներելու մասին: Եւ որովհետև այդ բոլոր խնդիրների գումարը գերազանցում է որոշած 50,000-ին, այդ պատճառով քաղ. վարչութիւնը մի զեկուցում է տալու դումային, որ 50,000-ը բաժանվի, համեմատական չափով, խնդրատուների մէջ:

◆ Պետրոգրադի Հայկական Կոմիտէի լիազօր տ. Եղիսաբէթ Ասրիբէկեանը, որ մի ամիս առաջ եկել էր Պետրոգրադից և Երևանի նահանգում ժողովել որբեր, իր առաքելութիւնը լիովին կատարելով, իր աջակից օրիորդ Մարիամ Ասրիբէկեանի հետ անցաւ Թիֆլիսով և վերադարձաւ Պետրոգրադ: Ն. Ասրիբէկեանը կազմակերպել է և Մ.-Ղարաքիլիսում բացել Պետրոգրադի Հայկական Կոմիտէի որբանոցը, ուր զետեղված են 175 որբեր: Որբանոցը, որ բացվել է անցեալ շաբաթ, դրված է ամենալաւ հիմունքների վրա: Տարաբաղդաբար միւս լիազօրը՝ տ. Ն. Սարգսեանը, հիւանդութեան պատճառով, հարկադրված էր աւելի վաղ վերադառնալ Թիֆլիս: Որբանոցը յանձնված է փորձված ղեկավար-ուսուցչուհու և որբանոցին կից բացված է դպրոց:

◆ Փոխարքայի դիւանատունը ներկայումս զբաղված է բնակարանային վարձեր սահմանելու ծրագիր մշակելու գործով: Այս ծրագիրը տարածվելու է Կովկասի բոլոր քաղաքների և գիւղաքաղաքների վրա:

◆ Ինչպէս լսում ենք, քաղ. դումայի իրաւասուների ընտրութիւնը տեղի է ունենալու յունվարի սկզբից յետոյ, այսինքն յունվարի կէսերին:

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը այցելելով պետական և միւս բանկերը, խնդրել է Քաղաքների Միութեան անունից այդ հաստատութիւններում ծառայողներին մասնակցել զինւորներին ընծաներ ուղարկելու գործի կազմակերպութեանը: Ծառայողները լիակատար պատրաստակամութիւն են յայտնել իրանց լուման նուիրելու զինւորներին օգնելու գործին:

◆ Նահանգապետը թոյլատրել է «Լեհական տանը» մի ներկայացում կազմակերպել Արքունական թատրոնում յօգուտ Լեհաստանի փախստականների:

◆ Վերջին օրերս քաղաքում այլևս խոլերայով հիւանդանալու դէպքեր չէին լինում, բայց երէկ խոլերայով հիւանդացել է մէկը և տարվել է № 40 լազարէթը:

◆ Դեկտեմբերի 1-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր 34 վ., շաքար 1 վ., գարի 2 վ., մակարոն 2 վ., նաւթ 5 վ., գինի 8 վ. և կօնսերվ 1 վ.:

◆ Մթերակիր վագոնների նարեադներ ստանալու համար նախ պէտք է խնդրով դիմել Թիֆլիսի քաղ. վարչութեան, ապա ստացված նարեադները պէտք է ներկայացնել [illegible] Շաշկովսկիին [illegible]:

◆ Որովհետև որոշված է տեղական մի [illegible]

պէտքերի համար, այդ պատճառով տեղական առևտրականների մի խումբ դիմել է վաճառականների աւագ Արշակ Միլեանին, խնդրելով, որ սա, առևտրի և արդիւնաբերութեան շահերն ի նկատի ունենալով, միջնորդի պօստ-հեռագրատան կառավարչի առաջ, որ վերջինս նախօրօք յայտնի, թէ ի՞նչ առևտրատներից պէտք է վերցվեն հեռախօսները, և եթէ դրանք վերցվելու լինեն խոշոր ու եռուն առևտրատներից, դրանով նրանք մեծապէս կը վնասվեն, ըստ որում կը վնասվի առևտրի և արդիւնաբերութեան գործը. ուստի, այս բանից խուսափելու համար, աւագ Միլեանը ինքը կարող է ցուցմունքներ տալ, թէ ումից կարելի է վերցնել և ումից՝ ոչ: Եւ նա պէտք է այնպիսի ցուցում տայ, որ հեռախօսները վերցվեն այնպիսի առևտրատներից, որոնցում հեռախօսի բացակայութիւնը քիչ վնասներ կարող է պատճառել:

◆ Վաճառականական բանկի ակցիոնէրների ժողովը նոյեմ. 29-ին չը կայացաւ, և յետաձգվեց մինչև դեկտեմբերի 20-ը:

◆ Վրիպակ.—Երէկվայ հայկական ներկայացման ռեցենզիայի մէջ սպրդել է մի այսպիսի սխալ. գրված է, թէ՝ «ռուսական առանձնայատուկ ոգին ուժեղ կերպով էր շեշտվում». պէտք է լինի՝ «չէր շեշտվում»:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտեմբերի 8-ին, Արտիստական Ընկ. դահլիճում, Թիֆլիսի Երաժշտական Ընկ. հրաւէրով երիտասարդ լեհ դաշնակահար Յովսէփ Տուրչինսկին տալու է մի համերգ: Ժամանակակից խոշոր դաշնակահարների շարքում նա անշուշտ բռնում է պատուաւոր տեղ: Բուզօնու աշակերտ Տուրչինսկին միանգամից իր վրա յառեց երաժշտական աշխարհի ուշադրութիւնը ոչ շատ հեռու ժամանակներս՝ 1911 թ., երբ համառուսական դաշնակահարների մրցութեան Պետրոգրադում միաձայն տրուաւ առաջին մրցանակը ու մամուլի կողմից միահամուռ գովաբանվեց: Պ. Տուրչինսկին նուագել էր Լիստը գերազանց: Վերջին տարիներս պ. Տուրչինսկին կօնցերտներ էր տալիս Եւրոպայում մեծ աջողութեամբ: Այս համերգին նա նուագելու է իր հայրենակից Շօպէնի ստեղծագործութիւնները, որ մի առանձին ոգևորութեամբ է կատարում լեհ երաժշտագէտը:

ՄԱՄՈՒԼ

«Рус. Вѣд.» լրագրում լոյս տեսած այն յօդուածի առիթով, որի մէջ յիշված էր վրացիների և Թուրքերի միմեանց ձեռք մեկնելու մասին, վրաց մամուլի մէջ լոյս են տեսնում յօդուածներ, որոնց հետ կարեւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին: Այդ յօդուածներից մէկի թարգմանութիւնը՝ «Սախ. Փուրց.» լրագրից՝ մենք արդէն տպել ենք «Մշակի» 258-րդ համարում: Այս անգամ էլ առաջ ենք բերում Քութայիսում լոյս տեսնող «Մեգօբարի» օրաթերթի № 42-ում լոյս տեսած «Պ. Սիրինի հեքիաթները» վերնագիրը կրող յօդուածի համառօտ բովանդակութիւնը: Յօդուածում նախ շեշտակի կերպով յիշված է ընդհանրապէս, որ ռուսական մամուլի մի մասը միակողմանի և անբարեխիղճ վերաբերմունք է ցոյց տալիս դէպի վրացիները: Ապա զարմանք յայտնելով, որ «Рус. Вѣд.»-ի նման առաջադէմ համարվող լրագիրը ևս նոյն բանն է անում, կանգ է առնում այդ լրագրի № 260-ում Սիրին ստորագրութեամբ լոյս տեսած այն յօդուածի վրա, որ վերաբերում է այս տեսութեան սկզբում յիշված նիւթին:

Ցաւալի է, որ,—ասում է «Մեգօբարի» յօդուածագիր Իմէրին, — հակառակ Սիրինի պնդումին, այդպիսի միութիւն Թուրքերի և վրացիների միջև գոյութիւն չունի և եթէ անգամ գոյութիւն ունենար, այն ժամանակ նա զուրկ չէր լինի հեռատեսութիւնից և նպատակից, որովհետև եթէ պ. Սիրինը մտնէր վրաց ազգի ազգային-հասարակական դասերի խօսք ու գործունէութեան մէջ, կը տեսնէր, որ այդ դասերն իրանց գործունէութիւնը հաստատում են Կովկասում ապրող ազգերի համերաշխութեան վրա և նրանց համաձայնութեամբ են կամենում որոշել վրաց ազգի ապագայ վիճակը:

Հաւատացնում ենք պ. Սիրինին, որ վրաց ժողովուրդը զուրկ է նեղ շովինիստական տենդենցներից և ոմանց նման նա չէ ձգտում կովկասեան ազգերի մէջ հեգեմոնիայի: Նրա ձգտումները աւելի պարզ և բարեծնունդ են, այն է՝ վերապահել և տէրութիւն անել նրան, ինչ որ իրանն է և իրան կը պատկանի:

Զարմանալի չէ, եթէ հայ պլուտօկրատիայի տնտեսական նուաճողականութեան և քաղաքական անփութկոտութեան դէմ կապվի վրաց-Թուրքական միութիւն, որովհետև յիշեալ միութիւնը բնական պէտք է լինէր այն բանից յետոյ, երբ վերը յիշած նուաճողականութեան հետևանքները երկու ազգերի համար ևս միա- [illegible]

Խօսելով ապա Ռուսաստանի բիւրօկրատիայի գործելակերպի շնորհիւ Կովկասի ազգերի միջև ստեղծվող անտագօնիզմի և այդ ազգերի միութեան անհրաժեշտութեան մասին՝ յօդուածագիրը շարունակում է.

Մենք ոչ թէ Թուրքերի հետ, մեծ ուրախութեամբ կը կամենայինք համաձայնութեամբ գործել հայերի հետ ևս, որովհետև համոզված ենք, որ սա գործին աւելի օգուտ կը բերէր, սակայն մեր հարևան ազգի անպատասխանատու, բայց ամենակարող դասերը չը կամեցան այդ և հարևան ազգերի հետ համաձայնութեան փոխարէն ընտրեցին կոմսուհու cavalier galant-ութիւն անել:

Այնուհետև առաջ բերելով Սիրինի յօդուածի այն մասը, որ վերաբերում է ներկայ պատերազմից հայերի սպասելիքներին և նշանակութեանը՝ ասում է.

Եթէ Սիրինը կարծում է, թէ Կովկասի ազգերից որևէ մէկը որպէս թէ դէմ կը լինի Թիւրքահայերի ազատագրման, այն ժամանակ պէտք է համոզենք, որ նա դառն կերպով սխալվում է, որովհետև վրաց ազգը ոչ մի ժամանակ չէ կամեցել իր բաղդաւորութիւնը հիմնել ուրիշի դժբաղդութեան վրա և եթէ ուզենար իսկ, սա կը լինէր աններելի սխալմունք, որովհետև մի ազգ, որը ձգտում է հասարակապետութեան, չէ կարող մի ազգի ցանկանալ մօնարխիա: Այն ազգը, որը իրաւացիօրէն իրան նպատակ է ընտրել քաղաքական աւտօնոմիա, չի կարող միւս ազգի համար անարդար ճանաչել աւտօնոմիան: Ընդհակառակը, մեր անկեղծ ցանկութիւնն է, որ հայերը ոչ միայն Թիւրքիայում, այլ Ռուսաստանում ևս արժանանան քաղաքական անկախութեան:

Վերջում պ. Սիրինը Կովկասի մամուլի մի մասին մեղադրում է այն բանի մէջ, որ նա իբր թէ պնդելիս լինի, որ Կովկասում իրաւունք ունեն միայն Թուրքերը և վրացիները:

Մենք չը գիտենք, թէ ո՞րտեղ կամ ո՞ր լրագրում նման բան կարդացել է Սիրինը, սակայն եթէ արդարև կարդար էլ որևէ օրգանում, դա յիմարութիւն է և ոչ օրէնք. իսկ երբ Սիրինները անտեսութեան են տալիս օրէնքները, իրաւունք ունենք նրանց գործողութիւնը անուանել ոչ միայն անկանոն և անվայել, այլ և այնպիսի բան ևս, որից պրովօկացիայի հոտ է գալիս:

Ոչ մի առողջ դատող վրացու մտքով մինչև օրս չէ անցել խլել հայերից այն, ինչ նրանց է պատկանում, և եթէ Սիրինները վրացիներին իրանց սեփականութիւնը պաշտպանելու համար մկրտում են Թալանչի անունով, սրանում մեղաւոր է նրանց բարոյական թուլութիւնը և մտաւոր կուրութիւնը:

Տպագրելով «Մեգօբարի» լրագրի այս յօդուածը, մենք նախ չենք կարողանում մօտաւոր չափով անգամ ըմբռնել, թէ հայերի կողմից վրացիներին՝ սպառնացող որպիսի վերահաս վտանգից պաշտպանվելու անհրաժեշտութիւնից դրդված «Մեգօբարին» վրաց-Թուրքական միութիւնը այնքա՜ն անհրաժեշտ է գտնում: Եւ երկրորդ, կը կամենայինք իմանալ և այն, թէ երբ, ո՞րտեղ և ո՞րպիսի հայերի է դիմել «Մեգօբարին» նրանց հետ համերաշխական միութիւն ստեղծելու նպատակով, որ նրան չէ աջողվել այդ և մեկնած ձեռքը մնացել է օդի մէջ: Կուզէինք հաւատալ, որ «Մեգօբարին» ճիշդ է ասում, և եթէ այդպէս է, թող բարի լինի ցոյց տալու այն հայերի տեղը, որոնք ապերախտօրէն մերժել են համերաշխութեան համար երկարված ձեռքը:

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

174. 0—72

ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
(5-4.)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՄԱԿ. ՋԱՂԿԵԱՆԻ
1916 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Չը նայելով ամեն բանի թանգութեան, գները չեն աւելացված:
«Ծոցինը» 20 կ. «Սեղանինը» 30 կ.
Պատուէրները առանց կանխավճարի մնում են անկատար, և որպէս զի ժամանակին ստանան, պէտք է շտապեն վաղօրօք յայտնել:
Հասցէն՝ Թիֆլիս, ՄԱԿԱՐ ՋԱՂԿԵԱՆ
(ե. կ.) 883. 10—1

Իգօվկայի հայոց աղօթատան համար հարկաւոր է մի փորձառու, աջող ձայնով, երիտասարդ
ՏԻՐԱՑՈՒ:
Պայմանները՝ 500 ր. արդիւնք և 5 ր. սենեակի վարձ: Դիմել խնձ. Юзовка, (Екатер. губ.) հայոց քահանային:
Կարապետ ք. Դաւթեան
870. 4—3

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Յօգուտ «Մշակի» ֆօնդի
հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿԸ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍՆԱՀԱՏՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՑԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Սաաքեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերայիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում: 2. 0—4

КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
760. 30—13 (4. 2.)

ԲԺՇԿ. ՖԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ՝ որսկումներ, մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ հիմնաւոր բժշկութիւն սուր և խրօնիկական ցրպչէրի, փափուկ ու կոշտ շանկրի սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն ձևերով. բժշկական-առողջապահական խորհուրդներ: Եկւոր օտար քաղաքացի հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ հմուտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ իմ մօտ կազմակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն): Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և դեղեր 3 րուբլի վճարով: Գաղթականներին և չքաւորներին խորհուրդը ձրի՝ իմ մօտ: Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը: Հասցէս՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ.
Իմ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վեներական ախտերի բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով ու դեղերով, գ. 1 րուբ. 2) «Փորձանքների բժշկարան», անհրաժեշտ ամեն մի ընտանիքի, գ. 50 կ., 3) «[illegible]»՝ անէկդօտներ գ. 20 կ., 4) «[illegible]», ծիծաղաշարժ վօդեվիլ, գ. 20 կ., 5) «[illegible]», գ. 10 կ. Ճանապարհի ծախս 20 կօպէկ:
(ն. կ.) 311. 100—60



БИЧЪ ЧЕЛОВѢЧЕСТВА ПОБѢЖДЕНЪ.
На леченіе хроническаго триппера нужно потерять только 30 минутъ и Вы избавитесь разъ навсегда отъ этого недуга который Васъ мучилъ несколько лѣтъ, подтачивалъ Ваше здоровье, разрушалъ Вашъ организмъ и укорачивалъ Вашу жизнь.
ДАРОВОЙ РЕЦЕПТЪ.
Нужно взять только 2 двойныхъ флакона „рапидъ" и коробку пилюль разрѣшен. медиц. совѣтомъ за № 1295 и ежедневно теряя на леченіе только двѣ минуты въ теченіе трехъ недѣль будете совершенно здоровы. Въ теченіе пяти лѣтъ изобрѣтенный мною средство „рапидъ" излечило десятки тысячъ больныхъ и успѣло заслужить громкую извѣстность по всей россіи и даже заграницей.
Кромѣ того, преимущество моего предложенія заключается въ томъ, что Вы матеріально не рискуете, такъ какъ, если не излечитесь, то по полученіи отъ Васъ анализа мочи, указывающ., что болѣзнь не излечена, я немедленно возвращу Вамъ деньги, затраченныя на покупку моего лекарства.
Такая увѣренность въ благопріятномъ дѣйствіи моего препарата „рапидъ" основана на четырехлѣтнемъ съ нимъ опытѣ.
За это время тысячи больныхъ пользовались „рапидомъ," и результатомъ пользованія во всѣхъ случаяхъ было полное излеченіе, на что у меня имѣются доказательства въ видѣ очень многочисленныхъ благодарностей-писемъ. Такіе результаты говорятъ сами за себя и даютъ мнѣ полное право смѣло заявить что случаевъ неизлеченія препаратомъ „рапидъ" нѣтъ и каждый больной, употребившій два двойныхъ флакона препарата „рапидъ" безусловно излечивается, какъ бы болѣзнь долго ни продолжалась.
Обращаю вниманіе больныхъ на то обстоятельство, что моя увѣренность въ средствѣ „рапидъ" и мое обѣщаніе не голословны, въ подтвержденіе чего каждому, выписавшему отъ меня 2 двойныхъ флакона препарата „рапидъ", я вмѣстѣ съ лекарствомъ высылаю обязательство о возвратѣ денегъ въ случаѣ неизлеченія.
Цѣна за два двойныхъ флакона (полный курсъ леченія) и коробка пилюль 9 руб. Наложен. плат. и съ пересылкой 10 р. Нал. платеж. высылается только по полученіи 3 руб. задатка.
Заказы и требованія адресовать исключительно въ Кавказское отдѣленіе Московской Лабораторіи, М. Деламуре, Тифлисъ Эриванск. пл. Пушкинская 3
отд. 6|М. [illegible] этажъ.
609. 50—13 (4.)

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿ. Բ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Բ. Ն. ՆԱԶԱՐԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.:
Ս. Պ. ՊԱՐՍԱՄԵԱՆ—12—1 ժ. երեխ., հիւանդ. և ջղաբ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկհատ.:
[illegible]
Բժշկապետ Բ. Նազարեան
1. 0—210

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.